ՁԵՎ N3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 146

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր բնակավայրի գլխավոր հատակագծի տեքստային մասի փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր բնակավայրի գլխավոր հատակագծի տեքստային մասի հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
07–042–0401–0081 կադաստրային ծածկագրով 5.3811 հա մակերեսով հողամասից 0.57 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հնդավոր հողեր	07–042–0401–0081 կադաստրային ծածկագրով 5.3811 հա մակերեսով հողամասից 0.57 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողեր
07-042-0401-0082 կադաստրային ծածկագրով 5.0 հա մակերեսով (որից 0,14822 հա մակերեսով հատվածի նպատակային նշանակությունն արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական՝ գյուղատնտեսական արտադրական հողերի կատեգորիա է, իսկ 4,85178 հա մակերեսով հատվածը՝ գյուղատնտեսական նշանակության հնդավոր այգի)	07-042-0401-0082 կադաստրային ծածկագրով 5.0 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողեր
Նոր կառուցապատվող հողամասի նվազագույն մակերեսը 500 քմ	Նոր կառուցապատվող հողամասի նվազագույն մակերեսը 500 քմ, իսկ 07-042-0401-0082 կադաստրային ծածկագրով 5.0 հա մակերեսով հողամասի նվազագույն չափը՝ 210 քմ
Թույլատրելի հարկայնություն 2 հարկ	Թույլատրելի հարկայնություն 4-7 հարկ (ներառյալ 7-րդ հարկը) 07–042–0401–0081 (0.57 հա մակերես), 07-042-0401-0082 (5.0 հա մակերես) կադաստրային ծածկագրերով հողամասերում

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն.

քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով.

- ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրամադրված պայմանը (կցվում է),

4. ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Ձորաղբյուր բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, « 15 » «հուլիսի» 2022թ.